



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«17» 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 003 - 25

Նախաձեռնող՝

«ԱՌՄ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ

Կոփայքի մարզ, գ. Արամուս կենտրոնական փ. տ. 29

Գործունեությունը՝

Մայակովսկու բազալտների հանքերևակման
«ԱՌՄ» տեղամասում երկրաբանական
ուսումնասիրություն

Կոփայքի մարզ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 003 - 25

« 17 » հունվարի 2025թ.

Կոտայքի մարզի Մայակովսկու բազալտների հանքերևակման «ԱՌՄ» տեղամասում
Երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՌՄ ՍԹՈՒՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ փաստաթղթի տեսակը	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք Մայակովսկի բնակավայր

Ներածական մաս. Մայակովսկու բազալտների հանքերևակման «ԱՌՄ» տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում՝ Մայակովսկի բնակավայրից 2.0 կմ, Բալահովիտ բնակավայրի շինություններից՝ 1.7-2.2 կմ հեռավորությունների վրա և զբաղեցնում է մոտ 4,1 հա մակերեսով տարածք:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նպատակն է պարզաբանել բազալտների հաստվածքի պարամետրերը, որակական հատկանիշները՝ երեսպատման սալերի և այլ իրերի պատրաստման, իսկ արտադրական թափոնները՝ խիճ և ավազ շինարարական աշխատանքների համար: Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու համար հայցվող տեղամասը եզրագծվում է հետևյալ կողողինատներով (կողողինատները ներկայացված են ARMWGS-84 համակարգով):



1.	Y=8467910.39	X=4454579.13
2.	Y=8467970.25	X=4454563.27
3.	Y=8468026.27	X=4454569.47
4.	Y=8468032.28	X=4454571.81
5.	Y=8468078.44	X=4454576.99
6.	Y=8468086.78	X=4454577.89
7.	Y=8468131.28	X=4454575.33
8.	Y=8468145.14	X=4454579.48
9.	Y=8468143.49	X=4454514.27
10.	Y=8468129.68	X=4454449.11
11.	Y=8468127.10	X=4454444.13
12.	Y=8468087.72	X=4454440.62
13.	Y=8468074.52	X=4454421.05
14.	Y=8468067.02	X=4454418.11
15.	Y=8467985.63	X=4454382.83
16.	Y=8467972.28	X=4454368.91
17.	Y=8467939.01	X=4454359.56
18.	Y=8467889.51	X=4454372.95
19.	Y=8467923.49	X=4454388.18
20.	Y=8467949.85	X=4454440.22
21.	Y=8467925.40	X=4454462.75
22.	Y=8467871.73	X=4454438.95
23.	Y=8467854.76	X=4454431.42
24.	Y=8467854.80	X=4454485.55
25.	Y=8467886.55	X=4454480.06
26.	Y=8467894.63	X=4454580.31

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 6 հորատանցք՝ 126 մ³ ընդհանուր ծավալով, երեք հետախուզական գծերի վրա, ինչի համար 6 անգամ կկատարվի ՈՒԿԲ-1-VS ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Հորատանցքերի խորությունը նախատեսվում է 10-27 մ: Հորատումը կատարվելու է ՈՒԿԲ-1-VS հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թափկներով, 132 մմ սկզբնական տրամագծով և 76 մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատահանուկի ելքը կազմելու է 85%:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում՝ բազալտների զանվածից բլոկների ելքի տոկոսը որոշելու համար: Փորձնական բացահանքի ճակատի երկարությունը նախատեսվում է 15.0 մ, ծավալը կկազմի՝ 300 մ³, այդ թվում 250 մ³-ը թարմ բազալտներում: Այդ աշխատանքների ծավալներն են.

- հորատահանուկի փաստագրում՝ 126 գծ.մ,



- փորձնական բացահանքի փաստագրում՝ 15 գծ.մ,
ընդամենը՝ 141 գծ.մ:

Տեղամասի բազալտների որակական հատկանիշները պարզաբանելու նպատակով նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից կատարել նմուշարկում:

Ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 23 նմուշ, այդ թվում 21 հանուկային և 2 մենաքարային նմուշ, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Բազալտների քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ՝ այդ թվում 2-ը հորատահանուկից, 1-ը փորձնական բացահանքից:

Հորատումից ստացված ամբողջ հորատահանուկը ենթարկվելու է նմուշարկման: Նմուշարկումը նախատեսվում է սեկցիոն: Հորատահանուկի միջին տրամագիծը 76 մմ է: Կնմուշարկվեն հորատման ամբողջ ծավալի 85%-ն արմատական ապարներում:

Փորձնական բացահանքից նախատեսվում է վերցնել /20x20x20 սմ/ չափի 2 մոնոլիտ նմուշներ:

Տեղամասի խիստ հողմահարված, ճեղքավորված բազալտների պիտանելիությունը որպես խիճ և ավագ շինարարական աշխատանքների համար պարզելու նպատակով՝ անհրաժեշտ է վերցնել 2 համախառն նմուշ, յուրաքանչյուրը 150 կգ, ընդհանուր՝ 300 կգ քաշով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական, քիմիական, պետրոգրաֆիական ուսումնասիրություններ:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Նախատեսվում է 43 մ² մակերեսով 6 հորատման հրապարակի և դրանց մոտեցնող ճանապարհների կառուցում, ինչպես նաև հանքերակմանը մոտեցող ճանապարհների նորոգում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում:

Ճանապարհները նախատեսվում է կառուցել 500 ս նրկարությամբ, 2.5 մ լայնությամբ և 0.7մ խորությամբ, ինչպես նաև նախատեսվում է կատարել 1.0 կմ ճանապարհի նորոգում:

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ առաջանալու են հետևյալ տեսակի թափոնները՝ չտեսակավորված կենցաղային աղբ, բանեցված շարժիչների յուղեր, իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքները, որոնք իրականացվելու են հորատահարթակների և փորձնական բացահանքի մակերեսներում, կատարվելու են անմիջապես աշխատանքների ավարտից հետո: Բացի տեխնիկական ռեկուլտիվացիայից նախատեսվում է նաև կենսաբանական ռեկուլտիվացիա՝ 258.0 մ² մակերեսով:

Ընդամենը ռեկուլտիվացման գումարը կկազմի 544820 հազ. ՀՀ դրամ, որից 10320 հազ. ՀՀ դրամը կենսաբանական ռեկուլտիվացիայի համար:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի առաջացման աղբյուրներ կհանդիսանան միայն հորատման աշխատանքներն ու տրանսպորտի տեղաշարժը: Տրանսպորտային միջոցների տեղաշարժից առաջացող գումարային հաշվարկային



ծայնային բնութագիրը Մայակովսկի բնակավայրի մոտ կկազմի՝ 20 դԲԱ (նորման 45դԲԱ) պայմանավորված աշխատանքների տեսակով, հետևաբար, ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը ազդեցություն չեն ունենա բնակելի տարածքների և տեղում աշխատողների վրա:

Ըստ ներկայացված հաշվետվության՝ տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ բնության հուշարձանների սահմաններում: ԲՀՊ տարածքներ չկան նաև հարակից բնակավայրերի մոտակայքում: Հայցվող տարածքում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա սպասարկման կետերում կամ կայաններում, ինչը կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով,
- կենցաղային աղբը նախատեսվում է հավաքել հատուկ պարկերի մեջ՝ հետագայում տեղափոխելով մոտակա աղբահավաք կետեր, պայմանագրային հիմունքներով,
- արտանետվող վնասակար նյութերի քանակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է լեռնատրանսպորտային միջոցների վրա արտանետվող նյութերի չեզոքացուցիչների՝ կատալիտիկ ֆիլտրերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ջրցանի իրականացում՝ տեղամասին մոտեցնող ճանապարհի երկայնքով, մաքրվածքների և փորձնական բացահանքի անցման տարածքներում,
- կեղտաջրերի հավաքում հորատից հորում, որի դատարկումն իրականացվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով,
- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո ռելիևիվացիայի իրականացում,
- իրականացվելու են բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,
- անվտանգության նկատառումներից ելնելով կատարվելու է աշխատանքների իրականացման տարածքների մեկուսացում/ցանկապատում: Անվտանգության ապահովման նպատակով մուտքային ճանապարհների մոտ՝ հորատանցքերի հարևանությամբ տեղադրվելու են զգուշացնող ցուցանակներ,
- երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժը բացառվելու է:

Բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը կազմում են 895.000 հազ. ՀՀ դրամ:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- հողային ծածկույթի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
- վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների



մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

- տեղամասի տարածքում հորատման աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Հայցվող տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար ընկերությունը նախատեսել է տարեկան 350.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտով նախատեսված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:



ԵՐՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՌՄ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Մայակովսկու բազալտների հանքերևակման «ԱՌՄ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան